http://www.arit.am/

****

Սյուզան Դեսսելի 365 ֆորմաները՝ Նարեկացի արվեստի միությունում

Հունիսի 21-ին Նարեկացի արվեստի միության ցուցասրահում կբացվի Սյուզան Դեսսելի (Նյու-Յորք, ԱՄՆ) անհատական ցուցահանդեսը:

Դեսսելի ինստոլացիան պարունակում է 365 ֆորմաներ, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է մեջք-մեջքի տված ծծմայրերի մարմիններից: Այն ներկայացնում է յուրաքանչյուր երեխայի համար կուրծք տալու 24-ամսյա պարտադիր նվազագույն շրջանը: Մի կողմում՝ ոսկեպատ, հայկական խաչքար է, մյուսում՝ Դավթի հրեական վեցաթեւ աստղը, որ խաղաղորեն վկայակոչում են ուրիշների միջեւ համագործակցության դրական տարրերը:

Դեսսելի կողմից բազմամաս ֆիգուրների օգտագործումը հղում է կանանց կյանքի որոշ կողմերի ընդհանրությանը, մինչդեռ դրանց միջեւ առկա տարբերությունները խորհրդանշում են նրանց անհատականությունը: 365 ֆորմաների եւ նռան 365 հատիկների քանակների համընկնումը պատահական է, բայց՝ տեղին:

"Իմ աշխատանքը տեսողական մեկնաբանություն է հասարակական հարցերի եւ միտումների մասին, հաղորդում իմ այն համոզմունքի վերաբերյալ, թե մեզանից յուրաքանչյուրը հասարակության բնույթի վճռորոշ գործոնն է:Երբ մտածում էի իմ աշխատանքի շուրջ, որ պիտի ստեղծեի Երեւանում որպես Արվեստի եւ մշակութային ուսումնասիրությունների լաբորատորիայի կողմից հյուրընկալված արտիստ, իմացա 1999 թվականին Եղեգիսում (Վայոց Ձորի մարզ) գտնված միջնադարյան հրեական գերեզմանոցի մասին: Այս նյութը դարձավ Հայաստանում կատարելիք իմ աշխատանքի միջուկը: Իմ գործը կոնցեպտուալ է. պատմական արտեֆակտի տեսողական մեկնաբանություն՝ հիմնված 13-րդ դարի հրեական գերեզմանոցի հնագիտական պեղումների վերաբերյալ զեկույցներից քաղված նյութի եւ դրան հաջորդած հետազոտության վրա, որ կատարել եմ միջնադարյան հրեական համայնքների եւ մասնավորապես կանանց եւ ընտանիքների մասին: Ստեղծագործությունը կամրջում է անցյալը ապագայի պոտենցիալին".- մեկնաբանում է Սյուզան Դեսսելը:

Այդ նախագիծը իրականացվել է Հայաստանում "Արվեստի եւ մշակութային ուսումնասիրությունների լաբորատորիա" կազմակերպության "Գեղարվեստական կոմունա" Արվեստագետների միջազգային կացարանի ծրագրերի շրջանակում: